(Նoտրագիր Բ.)

46. Բան տաղաչափական գովեստի՝ ասացեալ զա-
զար վշտալի Նուաստախոհ աբեղայի եղբօր տիրացու
զազարի, ի վ՚ր լուսանկար գերահրաշ Տաճարին
5 Ամենազօր կենսատու Սբ՚յ Խաչին ք՚սի. փոքր ինչ
ի հեռուստ առեալ զսկիզբն։

Արշակունեաց՝ մեծ տ՚ուե՚՝ բարձման զկնի.
ըստ յայտնուե՚՝ տեսլեան վեհի՝ հովւապետի։
Աշխարհս հայոց՝ դրախտ նորատունկ՝ զուարճալի.
10 ազգի ազգի՝ հրացայտ հողմով՝ տապախարշի։
Ասքանպեան՝ ազատ սերունդք՝ ծռ՚յ կարգի.
տերանց խստաց՝ անողորմից՝ յամենայնի։
Լուծ չարաչար՝ ծռ՚յուե՚՝ դառն աղէտի.
ի պարանոց՝ ազատ որդւոցս՝ եդեալ լինի։
15 Եւ այս հընոց՝ տոչորակէզ՝ բաբիլոնի.
երկայն ամաւ՝ խիստ բորբոքեալ բոց արձակի։
† Սակայն զթած՝ տ՚րն բարերար՝ մեզ ողորմի.
ըստ օրինակի՝ ժողովրդեանն՝ իսրայէլի։
Երբեմն երբեմն՝ դարձ գերուե՚ն՝ ըս մեր առնի.
20 հովիւ տալով՝ արեամբ իւրով՝ գնեալ հօտի։

46ը Աթոռ եդեալ՝ ի շիրակվան՝ ք՚ղք անի.
սմբատ արքայն՝ անդ սուղ ինչ ամս՝ թագաւորի։
Որ էր ազգաւ՝ եբրայեցի՝ բազրատունի.
թագդիր կարգեալ՝ իշխանուբ՚՝ դրան արքունի։
25 Ի նոյն ազգէ՝ գագիկ անուն՝ այր փառաւոր.
ի ճակատու՝ պատերազմի՝ քաջ զօրաւոր։
Պսակեալ թագիւ՝ ընդելուզեալ՝ մարգարտաւոր.
վասպուրական՝ մեծ գաւառին՝ իշխեալ բոլոր։
Զգունդ թշնամեաց՝ ասպատակաց՝ մեքենաւոր.
30 յերկրէս արար՝ հալածական՝ յոյժ հեռաւոր։
Գուն իսկ գործեաց՝ հոգւոյն ջանիւք՝ անչափաւոր.
յանբաւ տեղիս՝ շինուածս արար՝ զարմանաւոր։